

«Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2007թթ.» ժեղեկագրի չորրորդ հրատարակությունը մշակված է փոքր և միջին ձեռնարկատիրությանը բետական աջակցության 2008 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի նախաձեռնությամբ «Լոգիկոն Դիվելփինենթ» ՍՊԸ կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Տեղեկագրում առկա վիճակագրական տվյալները հաշվարկված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրադարակվող ցուցանիշների, հարկային դետական ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր մասնային դետական կոմիտեի, ինչպես նաև սույն տեղեկագրի մշակմանն առնչվող այլ աղբյուններից հավաքագրված դաշտնական և ոչ դաշտնական տեղեկատվության հիմնան վրա:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը և «Լոգիկոն Դիվելփինենթ» ՍՊԸ-ն դատասխանավորություն չեն կրում սույն տեղեկագրում ներկայացված տվյալների համար:

Տեղեկագրում բերված տվյալների օգտագործումն առանց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համաձայնության չի թույլատրվում:

Տեղեկագիրը նախատեսված չէ վաճառքի համար:

© ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, 2008

Տպագրված է «Ասողիկ» հրատարակչության տպարանում



ՓՈՔՐ ԵՎ ՄԻԶԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻԶԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2006-2007 թթ.

ԶՈՐՈՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

osce 



Երևան 2008

ԲՈԿԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....4

ՄԱՍ 1. Փոքր և միջին ձեռնարկատիրության բնութագիրը Հայաստանում.....5

ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները5

Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու հետ կաղված օրենսդրական հարցերը.....7

Գրանցման կազմակերպարավական տեսակները.....9

Ձեռնարկատիրական գործունեության լիցենզավորումը.....13

Մտավոր սեփականության դահլյանության հարցերը.....15

Հարկային համակարգը ՓՄՁ սուբյեկտների համար.....23

Մախսային համակարգը ՓՄՁ սուբյեկտների համար.....31

Անշարժ գույքի վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտների սեփականության,

վարձակալության, օգտագործման և այլ իրավունքների դետական գրանցման ընթացակարգերը.....39

ՄԱՍ 2. Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ներկայացնող ցուցանիշներ.....44

Համախառն ներին արդյունք44

Կազմակերպությունների բանակ.....47

Զբաղվածություն.....53

Արտադրություն.....55

Օսարեկրյա ներդրումներ57

Հարկեր.....61

ՓՄՁ զարգացման ինդեքս.....64

ՄԱՍ 3. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համեմատական վերլուծություն.....66

Հավելված. Լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեության տեսակների ցանկը

Նախաբան

Սույն ձեռնարկը հանդիսանում է Հայաստանում փոքր և միջին ձեռնարկաշիրության (ՓՄՁ) ոլորտին նվիրված վերլուծական տեղեկագրերի շարի չորրորդ հրատարակությունը, որը նախաձեռնվել և հրատարակվել է սկսած 2004 թվականից փոքր և միջին ձեռնարկաշիրությանը դեմքան աջակցության տարեկան ծրագրերի ժամանակներում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկաշիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրանի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) և Եվրոպայի անվտանգության և համագործակցության երևանյան գրասենյակի (ԵԱՀԿ) կողմից: Տեղեկագիրը հանդիսանում է յուրօրինակ վերլուծական նյութ, որը ներառում է Հայաստանում ՓՄՁ ոլորտը ներկայացնող մի շարֆ վիճակագրական ցուցանիւններ, որոնք մշակված են միջազգային լավագույն մեթոդոլոգիայի կիրառմամբ և փորձագույնության են ենթարկված միջազգային փորձագետների կողմից: Հաշվարկված վիճակագրական ցուցանիւնների թվում են երկրի համախառն ներին արդյունություն, զբաղվածների թվաքանակում, զնարկած հարկերի, տուրերի և այլ դարտադրի վճարների, և ստեսվարող սուբյեկտների թվաքանակում ՓՄՁ ոլորտի մասնաբաժնը, ՓՄՁ զարգացման ինդեքսը և այլն, ինչպես նաև Հայաստանի և մի շարֆ երկրների ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիւնների համեմատական վերլուծությունը:

Տեղեկագրում ներկայացված են ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշչները, վերլուծված են ձեռնարկաշիրական գործունեություն սկսելու հետ կաղված օրենսդրական հարցերը, ընկերությունների գրանցման կազմակերպարավական տեսակները, լիցենզավորումը, մտավոր սեփականության դահլյանությունը, հարկային և մասնային համակարգերը, ինչպես նաև անշարժ գույքի վերաբերյալ սեփականության, վարձակալության, օգտագործման և այլ իրավունքների դեմքան գրանցման ընթացակարգերը, այսինքն ՀՀ և ստեսական միջավայրը բնութագրող այն բաղադրիչները, որոնք թույլ են տալիս ընդհանուր դատկերացում կազմել ստեսական գործունեություն ծավալելու համար առաջացող հարցերի վերաբերյալ:

Այս ձեռնարկը ՓՄՁ ոլորտի հիմնահարցերով զբաղվող դեմքան և մասնավոր կառույցներին, միջազգային կազմակերպություններին, գիտակրթական հաստատություններին, ինչպես նաև գործարար համայնքի ներկայացուցիչներին կաղափարով Հայաստանում ՓՄՁ ոլորտի վերաբերյալ տեղեկատվությամբ:

ՄԱՍ 1 Փոնր և միջին ձեռնարկատիրության բնութագիրը Հայաստանում

ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները

Հայաստանում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են ելնելով աշխատողների թվաքանակից՝ իհմի ընդունելով «Փոնր և միջին ձեռնարկատիրությանը դեռական աջակցության մասին» ՀՀ օրենքը: ՓՄՁ սուբյեկտները են համարվում այն առևտարային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերները, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը համարածախանում է աղյուսակում ներկայացված չափորոշիչներին:

ՓՄՁ սուբյեկտներ են համարվում.

Ոլորս Դասակարգում	ՓՄՁ սուբյեկտներ		
	Գերփոր [աշխատողների թվաքանակ/ մարդ]	Փոնր [աշխատողների թվաքանակ/ մարդ]	Միջին [աշխատողների թվաքանակ/ մարդ]
Արդյունաբերություն և նյութական արտադրության այլ ճյուղեր	5	50	100
Հիմնարարություն և էներգետիկա	5	25	50
Գիտություն և կրթություն	5	25	50
Տրանսպորտ, առևտուր և ծառայություններ	5	15	30

Միաժամանակ մի քանի ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների որոշես ՓՄՁ սուբյեկտ դասակարգվելը որոշվում է դրան կողմից իրականացվող գործունեության հիմնական ոլորտի չափորոշիչներով:

ՓՄՁ սուբյեկտ չեն համարվում վարկային, աղյուսակագրական և ներդրումային կազմակերպությունները, գրավասները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղասները և ժահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դրաստ և կախյալ տնտեսական ընկերությունները:

Համեմատության համար Եվրոպի լիության երկներում ձեռնարկությունը համարվում է միկրո, եթե աշխատողների միջին տարեկան թվաքանակը կազմում է 0-9, տօքանառությունը կամ բալանսը չի գերազանցում 2 միլիոն Եվրոն: Փոնր է համարվում այն ձեռնարկությունը, որը տարեկան միջինն ունի 10-49 աշխատող, տօքանառությունը կամ բալանսը չի գերազանցում 10 միլիոն Եվրոն: Միջին է համարվում այն ձեռնարկությունը, որը տարեկան միջինն ունի 50-250, տօքանառությունը չի գերազանցում 50 միլիոն Եվրոն, իսկ բալանսը՝ 43 միլիոնը: ՓՄՁ-ների համար որպես

ՓՈՁՐ ԵՎ ՄԻԶԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

լրացուցիչ չափորոշիչ կիրառվում է նաև դրանց ամենախությունը, ինչը գործնականում նշանակում է, որ բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայների կամ շահույթում չափաբանի 25%-ից ավելին չի դատկանում այլ խուռը ընկերության¹:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ըստ «Փոնր բիզնեսի ակտի» փոնր է համարվում «այն ձեռնարկությունը, որն ունի անկախ սեփականատեր, գործում է անկախ և սվյալ բնագավառում չի գրանցնում գերիշխող դիրք: OrԵնք նաև սահմանում է թե, որն է համարվում փոնր բիզնես ըստ գործումներության տեսակի՝ արտացոլելով ոլորտային տարբերությունները: «Փոնր բիզնեսի աղմինհուսրացիայի» (ՓԲԱ) «Փոնր բիզնեսի չափի կանոնակարգի» միջոցով ՓԲԱ-ն կիրարկում է «Փոնր բիզնեսի ակտը»: ՓԲԱ-ն մշակել է նաև չափի ստանդարտների աղյուսակ, որը համապատասխան է Եյուսիս ամերիկյան արդյունաբերական դասակարգման համակարգի ճյուղային տարանջատմանը: ՓԲԱ-ի «Փոնր բիզնեսի չափի կանոնակարգը» ներառված է Ֆեդերալ կանոնակարգերի օրենսգրքի 13-րդ գլխի, մաս 121-ում:

1. 2003թ. մայիսի 6-ին Եվրոպական խորհրդի կողմից ընդունված դիրեկտիվ 2003/361/EC, որն ուժի մեջ է մտել 2005թ. հունվարի 1-ից:

Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու հետ կաղված օրենսդրական հարցեր

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն սկսելու նողատակով անհրաժեշտ է գրանցվել որպես առևտային իրավաբանական անձ (ԴԱ) կամ անհատ ձեռնարկատեր (ԱԶ):

ԱԶ գրանցման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է որևէ բանկում վճարել 3,000 դրամ դետական տուր համադատախան հաշվեհամարին: Այնուհետև, դեմք է լրացնել և ներկայացնել գրանցման դիմումը, որի ձևը տրամադրվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց դետական ռեգիստրի գործակալության (Պետական ռեգիստր) կողմից:

Պետական ռեգիստրը, բնարկելով դիմումը, կարող է մերժել կամ հաստատել գրանցումը: Մերժման դեմքում Պետական ռեգիստրը դիմելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է գրավոր բացառություն, իսկ հաստատման դեմքում որոշումն ընդունվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո տրամադրվում է գրանցման վկայականը:

ԴԱ գրանցման գործընթացը սկսելու նողատակով անհրաժեշտ է որևէ բանկում ընկերության անվանումը գրանցելու համար վճարել 5,000 դրամ դետական տուր, ինչդեռ նաև վճարել 12,000 դրամ Պետական ռեգիստրում ընկերությունը գրանցելու համար՝ համադատախան հաշվեհամարներով: Ընկերության անվանան գրանցումը կատարվում է Պետական ռեգիստրում: Անվանան գրանցման կամ մերժման մասին որոշումը կայացվում է 2 աշխատանքային օրվա ընթացքում: Այնուհետև, Պետական ռեգիստրից կարող եք վերցնել դիմումի ձևը, կանոնադրության նմուշը և իրավաբանական անձ հիմնադրելու մասին հիմնադրիների ժողովի արձանագրության նմուշը:

Օգտագործելով վերը բերված փաստաթղթերի օրինակելի ձևեր՝ անհրաժեշտ է անցկացնել հիմնադրիների ժողով, կայացնել իրավաբանական անձ հիմնադրելու մասին որոշում և կազմել նիսի արձանագրությունը, ինչդեռ նաև դեմք է դատարանը ընկերության հիմնադրի փաստաթղթը՝ կանոնադրությունը: Բացի այդ դահանջվում է, որ ընկերությունը մինչև գրանցման գործընթացը ներկայացնի ՀՀ օրենուկ սահմանված կառուցանքները և դրա դատարանը հավաստող փաստաթուղթը, որի չափը կախված է հիմնադրվող ընկերության տեսակից:

Ունենալով բոլոր նշված փաստաթղթեր՝ անհրաժեշտ է Պետական ռեգիստր ներկայացնել գրանցման դիմում, որից հետո առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում դեմք է տրվի ընկերության գրանցման վկայականը կամ գրանցումը մերժելու և դրա դատարաների վերաբերյալ գրավոր դատախան:

ՓՈՁՐ ԵՎ ՄԻԶԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ

Ակախ նրանից թե գրանցվել է ընկերություն, թե անհաս ձեռնարկատեր անհրաժեշտ է գրանցումից երեսուն օրվա ընթացքում հաշվառվել ՀՀ կառավարության առջնորդ հարկային դետական ծառայությունում (Հարկային ծառայություն) և ՀՀ սոցիալական աղահովագրության դետական հիմնադրամում (Սոցամ):

Հարակային ծառայությունում հաշվառվելը ենթադրում է հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀԴ) ստացում, որից հետո Սոցադրում հաշվառվելու համար անհրաժեշտ է ներկայացնել Պետական Ռեգիստրի վկայականի դատմատ, կանոնադրության դատմատ և ՀՎՀԴ:

Ավարտելով վերը նկարագրված ֆայլերը՝ ԻԱ համար անհրաժեշտ է ստանալ կնիք, ինչը դարտադրի չէ ԱԶ համար, սակայն ցանկության դեղում նրանի էլ կարող են ունեն ալ կնիք:

Եթե սնտեսական գործունեությունը լիցենզավորվող է, որը սահմանվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենի 43-րդ հոդվածով, աղյա անհրաժեշտ է դիմել համադրատասխան լիցենզավորող մարմնին լիցենզիայի ստացման համար:

Անկախ գրանցման համար ընտրված ձևից, արտահանման կամ ներմուծման գործարմներ իրականացնելու դեղում անհրաժեշտ է գրանցվել նաև ՀՀ կառավարության առջնորդ մասնային դետական կոմիտեում (Մասնային կոմիտե): Ներմուծվող կամ արտահանվող աղյան ների մասնագերծումը կատարվում է այն տարածաշրջանային մասնատանը, որտեղ կազմակերպությունը գրանցված է:

Հայաստանի Հանրապետությունում առևտային ընկերությունների իրավական հիմերը սահմանված են ՀՀ բաղադրիչական օրենսգրքով (ընդունվել է 28.07.1998թ.-ին և ուժի մեջ մտել 01.01.1999թ.-ից): Իրավական և ընթացակարգային նորմերն առավել հանգամորեն սահմանված են հետևյալ առանցքային իրավական ակտերում.

- «Անհաս ձեռնարկատիրության մասին» ՀՀ օրենի (ուժի մեջ է 25.04.2001թ.),
- «Սահմանափակ դատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենի (ուժի մեջ է 21.11.2001թ.),
- «Քածնեթիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենի (ուժի մեջ է 27.11.2001թ.),
- «Ընկերությունների ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենի (ուժի մեջ է 15.12.1999թ.),
- «Իրավաբանական անձանց դետական գրանցման մասին» ՀՀ օրենի (ընդունվել է 03.04.2001թ. և ուժի մեջ է 2002թ.),
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենի (ընդունվել է 30.05.2001թ. և ուժի մեջ է 27.06.2001թ.):

Անօրինական ձեռնարկատիրությամբ գրանցվելու դեղում ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով նախատեսված է տուգանի

ամսական նվազագույն աժսատավարձի տանիհինգից երեսնադաշիկի չափով (հոդված 169), ինչղեն նաև «Դարկերի մասին» ՀՀ օրենիքը սահմանված է տուգանի անօրինական ձեռնարկատիրության արդյունքում ստացված համախառն եկամուտի կեսի չափով (հոդված 26):


Գրանցման կազմակերպարավական տեսակները

Համաձայն ՀՀ օրենսդրության ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ցանկացած բաղադրային իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից: Զաղացացին իրավունք ունի նաև առանց ԻԱ կազմակուրելու գրադիւն ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե գրանցվել է որպես ԱԶ:

ԱԶ-ը ֆիզիկական անձ է, որը իրավունք ունի առանց ԻԱ կազմակուրելու, իմբուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: ԱԶ-ն օժանական է լիակատար դատավաճառավորությամբ, այսինքն իր դատավաճառությունների համար դատասխանատու է իրեն դատականող ամբողջ գոլովով:

ԻԱ-ը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ հիմնվելով որոշակի չափանիշների վրա: Որպես այդպիսի չափանիշներ կարելի է դիտարկել իրավաբանական անձի գործունեության նորատակը, հիմնադիրների կազմը, նաև նակարագրությունների իրավունքների բնույթը:

ԻԱ-ն ըստ գործունեության նորատակի, կարող է լինել շահույթ ստանալու նորատակ հետապնդող կամ առևտարային և շահույթ ստանալու նորատակ չհետապնդող՝ այսինքն ոչ առևտարային կազմակերպություն:



Առևտային կազմակերպություն հանդիսացող ԻՄ կարող են ստեղծվել Տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով: Տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են հաճարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների) բաժնեմասերի բաժանված կամոնադրական (բաժնեհավաք) կառիտավ ունեցող առևտային կազմակերպությունները: Մասնակիցների ավանդների հաշվին ստեղծված, ինչողև նաև Տնտեսական ընկերակցության կամ ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գոյլը նրան է դատկանում սեփականության իրավունքով: Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված (կոմանդիտային) ընկերակցության ձևով: Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ դատասխանաւորությամբ ընկերությունների և բաժնեհարական ընկերության ձևով:

Կողմերահիվները, կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նղատակ հետադնդող կամ նման նղատակ չհետադնդող կազմակերպություններ:

Տնտեսական ընկերակցություններն են.

- **Լիակատար ընկերակցության (ԼԸ)** ստեղծման հիմքում ընկած է համատեղ գործունեություն իրականացնելու նղատակով մի բանի ֆիզիկական և իրավաբանական անձանց միավորվելու ցանկությունը, ընդ որում կարիտավաները միավորելու և իմբուրույն առևտարային կազմակերպություն ձևավորելու միջոցով, այսինքն ԼԸ-ի մասնակից կարող են լինել միայն ԱԶ-ները և/կամ առևտարային կազմակերպությունները: Վերջիններս կարող են լինել միայն մեկ ԼԸ-ի մասնակից:
 - **Վասահության վրա հիմնված ընկերակցությունը (ՎԸ)** ևս մի բանի անձանց և վերջիններիս կարիտավի միավորման տեսակ է: Այս տեսակը ընկերակցության մասնակիցները բաժանվում են երկու խմբի լիակատար ընկերների և ավանդատունների: Առաջինները ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում ընկերակցության անունից և լիակատար դատասխանատվություն են կրում ընկերակցության դատավորությունների համար իրենց ողջ գոլյով, այսինքն ընկերակցության այս խմբի մասնակիցների իրավական ռեժիմն աճբողջությանը համապատասխանում է լիակատար ընկերակցության մասնակիցների ռեժիմի հետ: Երկրորդ խումբը մասնակիցներ՝ ավանդատունները, ավանդներ են ներդնում և իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում ընկերակցության գործունեության հետ կառված վճարների ռիսկը, չմասնակցելով ընկերակցության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությանը:

Տնտեսական ընկերություններն են.

- **Սահմանափակ դատախանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ)**
Ներկայումս ծեղնարկահրական գործումներության կազմակերպման ամենատարածված տեսակներից է: ՍՊԸ է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրամ ընկերությունը, որի կանոնադրական կադիտավոր բաժանմունքը կազմության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: ՍՊԸ-ի մասնակից կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք: ՍՊԸ-ն կարող է հիմնադրվել մի քանի անձանց կամ մեկ անձի կողմից: Ընկերության մասնակիցների թիվը չուեց է գերազանցից 49-ը: Հակառակ դեմքում, այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաժնետիրական ընկերության, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դատական կարգով ենթակա է լրիշարման: ՍՊԸ-ին բնորոշ են մի շարժ առանձնահատկություններ: Այսինքն, ընկերության մասնակիցները դատախանատու չեն ընկերության դարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վճարման դիմումը, ինչից էլ հետևում է «սահմանափակ դատախանատվություն» անվանումը: Որպես սահմանափակ դատախանատվություն ունեցող ԻՍ ՍՊԸ-ն դասնում է ավանդների ձևով ընկերության մասնակիցների կողմից տրամադրած գույքի սեփականաեր: Այն բանից հետո, եթե ընկերության մասնակիցները կատարում են իրենց ավանդները Ընկերության կանոնադրական կադիտավորմ, կորցնում են այդ գույքի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը:
- **Լրացնից դատախանատվությամբ ընկերություն (ԼՊԸ)** է համարվում մեկ կամ մի քանի անձանց կողմից հիմնադրված ընկերությունը, որի կանոնադրական կադիտավոր բաժանմունքը է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ դատախանատվությամբ ընկերությունից ԼՊԸ-ն սարբերվում է մասնակիցների դատախանատվության բնույթով, քանի որ դարտավորության դատախանատվության համար ընկերության գույքի անբավարության դեմքում նաև ընկերության մասնակիցները կարող են ենթակել համադրած լրացնից դատախանատվության: Սակայն, այդ դատախանատվությունն ունի իր սահմանները: Այն վերաբերում է ոչ թե մասնակից ամբողջ գույքին, այլ միայն դրա մի մասին՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմադաշտիկի չափով: ԼՊԸ-ի մասնակիցներ կարող են լինել ինչպես ֆիզիկական, այսպես էլ իրավաբանական անձինք: Ընդհանուր առմանք, եթե չփառարկենք ԼՊԸ-ի դատախանատվության առանձնահատկությունները, ընկերությունների այս ձևով կարելի է դիմարկել որպես ՍՊԸ-ի տարածեսակ, քանի որ սահմանվում է,

որ ՀՊԸ-ի նկատմամբ կիրառվում են ՍՊԸ-ի մասին օրենսդրության դրույթները:

- **Բաժնետիրական բնկերություն է (ԲԸ)** համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կարիքալը բաժանված է ընկերության նկատմամբ դարտավորական իրավունքի հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: Բաժնետիրական ընկերության մասնակիցները դատախանածվություն չեն կրում ընկերության դարտավորությունների համար և իրենց դատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կարգված վճասների ռիսկը: ԲԸ-ն կարող է ստեղծվել մեկ անձի կամ կազմված լինել մեկ անձից՝ մեկ բաժնետիրոջ կողմից բոլոր բաժնետոմսերը ձեռք բերելու դեմքում: ԲԸ լինում են երկու տեսակի՝ բաց և փակ: Բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ) անցկացնում է իր թողարկված բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն և դրանց ազատ վաճառք: Փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների միջև և դրանց փոխանցումը այլ անձանց արգելվում է:
- **Արտադրական կոռուպտաշիվները (ԱԿ)** հանդիսանում են առևտրային կազմակերպություններ և իրականացնում են ձեռնարկաշիրական գործունեություն: Այս բաղադրացիների և ԻԱ անդամության վրա հիմնված ու իր անդամների գովային փայականական միավորնան միջոցով նաև ակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նղատակով ստեղծված կամավոր միավորում է: Կոռուպտաշիվի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն առաջին հերթին հանդիսանում է ոչ միայն կարիքների, այլ հաճատեղ գործունեություն իրականացնելու նղատակով անձանց միավորում: Կոռուպտաշիվի կառավարումը հիմնված է «մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքի վրա, որը նշանակում է կոռուպտաշիվի կառավարման գործում բոլոր նաև ակիցների լիակատար հավասարություն: Կոռուպտաշիվի կառավարման բարձրագույն մարմննը նրա անդամների ընհանուր ժողովն է: Եթե կոռուպտաշիվն իր գործունեության արդյունդում ունենում է վճառություն, ապա անդամները դարտավոր են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո երկու ամսվա ընթացքում, լրացնուցիչ վճառների միջոցով փակել առաջացած վճառները: Այս դարտավորությունը չկատարելու դեմքում կոռուպտաշիվը դարտավորների դահանջով կարող է լուծարվել դատական կարգով:

Քայատանի Քանրադետությունում առևտրային ընկերությունները:

Ի առավել հաճախ հանդիպող տեսակներն են՝ ՍՊԸ-ներն ու ԲԸ-ները: Osawերկյա ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են հիմնադրել ընկերություններ և մասնակցել դրանցում ՀՀ բաղադրական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմուններով: Osawերկյա ներդրողներն իրենց ընկերությունները/գործունեությունը ՀՀ-ում գրանցում են հիմնականում ՍՊԸ-ի ու ԲԸ-ի տեսով:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻԳԵՆԴԱՎՈՐՈՒՄԸ

ԱԶ-ների, ֆիզիկական անձանց և առևտարյան ԻԱ համար գործունեության որոշ տեսակների իրականացման համար դափնիկում է ունենալ լիցենզիա՝ տվյալ գործունեության տեսակով գրաղվելու իրավունքը հաստառող դաշտունական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստառող դաշտունական փաստաթուղթը: Լիցենզիաների գործողությունը տարածվում է ՀՀ ամբողջ տարածքով: ՀՀ բաղադրական օրենսգրքով սահմանված են գործունեության որոշ տեսակներ, որոնցում ԻԱ կարող է ներգրավված լինել միայն հատուկ թույլտվություն (լիցենզիա) ունենալու դեմքում: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով (ընդունված 2001թ. մայիսի 30-ին), բացառությամբ հանրարյունաբերության ոլորտի, որը կարգավորվում է ՀՀ ընդերքի օրենսգրքով և «Ընդերքն օգտակար հանձնութիւն շահագործման նղատակով ուսումնասիրության և արդյունահաննան համար տրամադրելու մասին» (կոնցեսիայի մասին) ՀՀ օրենքով:

Դամաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, գոյություն ունեն լիցենզավորման ենթակա գործունեությամբ գրաղվելու համար լիցենզիաների երկու տեսակ՝

ա) **բարգ ընթացակարգով տրվող լիցենզիաներ** (բարգ լիցենզիա),

բ) **բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաներ** (բարդ լիցենզիա): Տնտեսության 21 ոլորտներում սահմանված է լիցենզավորման ենթակա գործունեության 111 տեսակ (Դավելված 1):

Պարզ լիցենզիան որոշակի գործունեությամբ գրաղվելու համար տրված թույլտվություն է, որով սահմանվում են այդ տեսակի գործունեության իրականացման ընթացքում դափնանման ենթակա դափնացմերն ու դայմանմերը: Այս դափնանմերի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է լիցենզավորման ոլորտային օրեններով:

Լիցենզավորման ենթակա գործունեության 111 տեսակներից միայն տասներեն են լիցենզավորվում բարգ ընթացակարգով: Միևնույն ժամանակ բարգվում է, որ այդ տասներեն տեսակները գործնականում ներառում են տնտեսական գործունեության նշանակալի մասը:

Պարզ լիցենզիաները տրամադրվում են «Լիցենզավորման մա-

սին» ՀՀ օրենքով սահմանված հետևյալ ընթացակարգով և դայմաններով.

- դարձ լիցենզիան տրվում է համաղատասխան փաստաթղթերի ներկայացումից հետո երեք օրվա ընթացքում,
- դարձ լիցենզիան տրվում է անժամկետ,
- դարձ լիցենզիան տրվում է առանց լիցենզավորող հանձնաժողովի որոշման,
- լիցենզավորված անձն իրավում ունի գրադպել լիցենզավորման ենթակա գործունեությամբ միայն լիցենզիայի դարտադրի դահանջների և դայմանների դահդաննան դեմքում,
- մինչև լիցենզավորման ենթակա գործունեությամբ գրադպելը, դարձ լիցենզիա ստացած անձն դարտավոր է ՀՀ կառավարության կողմից սահմանված մարմիններին ուղարկել գրավոր հաղորդագրություն, որտեղ դեմք է նշվեն լիցենզավորված ԻԱ անվանումը, գտնվելու վայրը, լիցենզավորված ֆիզիկական անձի կամ ԱԶ անունը, ազգանունը և բնակության վայրը, ինչպես նաև նրանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե սույն օրենի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեությունը դեմք է իրականացվի միայն համադատասխան վայրում), լիցենզիայի վավերադայնանները, լիցենզավորման ենթակա գործունեությունը սկսելու օրը:

Բարդ լիցենզիան ՀՀ կառավարության կողմից հաստատված լիցենզավորման ընթացակարգով որոշակի գործունեություն իրականացնելու համար տրվող թույլատվություն է, որով սահմանվում են այդ տեսակի գործունեության իրականացման համար անհրաժեշտ դահանջներն ու դայմանները: Այս դահանջների կատարման նկատմանք հսկողությունն իրականացվում է լիցենզավորման և ոլորտները կարգավորող օրենմերով՝ «Լիցենզիայի գործողության կասեցման դեմքեր», (հոդված 36) «Լիցենզիայի գործողության դադարեցման մասին» (հոդված 37):

Պարզ և բարդ լիցենզիաների միջև էական տարբերությունը բարդ լիցենզիաների տաճադրման ընթացակարգում լիցենզիայի տաճադրման ժամանակ ոլորտային լիցենզավորող հանձնաժողովի հայեցողական որոշումների կայացման անհրաժեշտությունը է:

Բարդ լիցենզիաներ տրամադրող մարմինների ցանկը սահմանված է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և լիցենզիաների բացաձակ մեծամասնությունը ենթակա է տրամադրման այս ընթացակարգով:

Այս լիցենզիաները տրվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված հետևյալ դայմաններին և դահանջներին համապատասխան.

- բոլոր փաստաթղթերի ներկայացումից հետո 30 օրվա ընթացքում (եթե օրենքով այլ բան նախատեսված չէ),

- անժամկետ (եթե օրենիվ այլ բան նախատեսված չէ),
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենիվ սահմանված դեղունում բարդ լիցենզիան կարող է ըսկել լիցենզավորման հաստատված կարգերին համապատասխան անցկացված մրցույթի միջոցով,
- լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված լիցենզավորող հանձնաժողովների եղակացությունների հիման վրա (սահմանված են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենիվ),

հանձնաժողովների եղակացությունները դեռև է կայացվեն և ներկայացվեն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենիվ սահմանված, բավական մանրամասն ընթացակարգային կանոններին և հետազույց լիցենզավորող հանձնաժողովների կողմից հաստատված առավել մանրամասն կարգերին համաձայն:

Պարզ լիցենզիա ստանալու համար հայտը կարող է գրավոր մերժվել լիցենզավորող մարմնում հայտը մուտքագրվելու օրվանից 3 օրվա ընթացքում: Բարդ լիցենզիա ստանալու համար կարող է հայտը գրավոր մերժվել լիցենզավորող մարմնում հայտը մուտք արվելու օրվանից ոչ ուշ, բայց 30 օրյա ժամկետում, եթե օրենիվ այլ բան նախատեսված չէ: Լիցենզիա ստանալու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ դեռև է նշվեն մերժման իրավական հիմքերը:

Դաշտայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենիի, եթե վերոհիշյալ ժամկետներում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում և հայտառում օրենիվ սահմանված կարգով և չափով վճարել է դետական տուրք և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացրել է լիցենզավորող մարմին, աղայ լիցենզավորող մարմինը դարտավոր է սույն մասում նշված ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտառուին տրամադրել լիցենզիա և լիցենզիան հայտառուին հանձնելու կամ ուղարկելու օրվանը հաջորդող օրվանից հայտառուն իրավունք ունի գրադպելու և վյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:

Մտավոր սեփականության ղափառականության հարցեր

Մտավոր սեփականություն ասելով սովորաբար հասկանում են օրենսդրությամբ ամրագրված իրավունքներ, որոնք ամենալայն իմաստով վերաբերում են արդյունաբերության, գիտության, գրականության և գեղարվեստի բնագավառներում մտավոր գործունեության արդյուններին:

Սովորաբար մտավոր սեփականությունը բաժանում են իրավունքների երկու հիմնական ոլորտների՝ «արդյունաբերական սեփականություն» և «հեղինակային իրավունք»:

Հս արդյունաբերական սեփականության ղափառականության մասին Փարիզյան կոնվենցիայի (ընդունված է 1883թ. մարտի 20-ին, որին, 1994թ. մայիսի 17-ի հայտարարության համաձայն, Հայաստանի Հանրա-

ղետությունն անդամակցում է 1991թ. դեկտեմբերի 25-ից (1-ին հոդվածի, արդյունաբերական սեփականության դահլիճանության օբյեկտներ են գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները, աղբանային նշանները, սղասարկման նշանները, ֆիրմային անվանումները, ծագման նշումները կամ ծագման տեղանունները և անբարեխիղ մրցակցության կանխումը:

Դեղինակային իրավունքը հիմնականում տարածվում է գրական, երաժշտական, արվեստի, լրասանկարչական և տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ, որը որոշակի իրավունքներ է վերաղահում դրանց հեղինակներին՝ որոշակի ժամանակահատվածում թույլատեղու կամ արգելելու իրենց ստեղծագործության այս կամ այն ձևի օգտագործումը: Ավելի լայն իմաստով հեղինակային իրավունքը ներառում է ուղղակի իմաստով հեղինակային իրավունքը, ինչպես նաև, այսուս կոչված, «հարակից իրավունքների» դահլիճանության մասին դրույթներ:

Ի տարբերություն նյութական օբյեկտների, մարդկային բանականության արգասիքը, ինչպեսև գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի մեջ իրագործված գաղափարն է կամ գրական, գեղարվեստական կամ երաժշտական ստեղծագործությունները, հասարակությանը մատչելի դաշնալուց հետո չեն կարող դահլիճանված լինել երրորդ անձանց կողմից օգտագործումից միայն այն փաստի ուժով, որ դրանի դատկանում են այս կամ այն անձին, բանի որ դրանց օգտագործումն այլևս չի կարող լիովին վերահսկվել դրանք ստեղծողների կողմից: Ահա այս կարևորագույն առանձնահատկությունն է, որ դարձել է բոլոր երկրների մտավոր սեփականությանը վերաբերող համադաշտախան օրենքների անկյունագրը:

Որպես ննան իրավիճակի կարգավորման լավագույն մեխանիզմ, ամբողջ աշխարհում ընդունված է հետևյալ մոտեցումը. ղետությունը օրենքով սահմանված կարգով ստեղծագործության տվյալ օրյեկտի նկատմամբ հեղինակին օժում է որոշակի իրավունքներով, ընդ որում, գովյային բացարձի իրավունքները տրամադրվում են որոշակի ժամկետով, որի ավարտից հետո տվյալ օրյեկտը վերածվում է համընդհանուր սեփականության և կարող է անարձել օգտագործել ցանկացած անձի կողմից և մանել բաղադացիական շրջանառության մեջ: Սա կատարվում է շատ դարձ ու տրամաբանական նորագույն՝ որոշեսզի, հասարակության շահերից ելնելով, աղահովվի և մտածության զարգացումը, մասնավորապես՝ արդյունաբերական սեխնոլոգիաների բնագավառում:

Այս առումով շատ յուրահատուկ մոտեցում կա հասկալես գյուտերի դահլիճանության հարցում, որը ենթադրում է այդ իրավունքները տրամադրել արտօնագրի միջոցով՝ փոխարենը հրադարակելով գյուտի եռթյունը: Այսպիսի մոտեցումը լիովին արդարացվում է նրանով, որ հասարակությունը հնարավորություն է սահմանում տվյալ գյուտն օգտագործել դրա իրադարա-

կումից հետո, օրենիվ սահմանված կարգով:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական ղահղանությունը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է՝

- ՀՀ Զաղագիական օրենսգրենով,
- «Արտնագրերի մասին» ՀՀ օրենիվ,
- «Աղրանային և սղասարկման նշանների, աղրանների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենիվ,
- «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենիվ:

«Արտնագրերի մասին» ՀՀ օրենիվ կարգավորվում են գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների (այսուհետ նաև՝ օրյեկտ) ստեղծման, իրավական ղահղանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Այս օբյեկտների նկատմամբ իրավունքը ղահղանություն է օրենիվ և հաստատվում է արտնագրով, այսինքն՝ դրանց իրավական ղահղանություն տրամադրվում է միայն ղետական գրանցման հիման վրա:

Որմես գյուտ իրավական ղահղանություն տրամադրվում է տեխնիկայի (ամենալայն իմաստով) բնագավառի որոշակի խնդրի գործնական լուծմանը, որը նոր է, ունի գյուտարարական մակարդակ և արդյունաբերության կիրառելի է (գյուտի արտնագրագումակության դայնաններ): Ընդ որում, համարվում է, որ գյուտն ունի գյուտարարական մակարդակ, եթե մասնագետի համար դա ակնհայտութեն չի բխում տեխնիկայի մակարդակից: Գյուտի նորության և գյուտարարական մակարդակի որոշման իմաստով տեխնիկայի մակարդակ հասկացությունը բնորոշվում է տեխնիկայի բնագավառին վերաբերող բոլոր այն տեղեկությունների հաճախմբությամբ, որոնք որևէ եղանակով հանրանաշելի են դարձել մինչև սյալ գյուտի առաջնության թվականը (տարի, ամիս, ամսաթիվ):

Որմես օգտակար մոդել կամ այսուհետ կոչված փոփոք գյուտ, օրենիվ սահմանված կարգով իրավական ղահղանություն տրամադրվում է նոր և արդյունաբերության կիրառելի այն լուծմանը, որը վերաբերում է արտադրության միջոցներին և սղառման առարկաների, ինչդես նաև դրանց բաղկացուցիչ նասերի կառուցվածքային իրականացնանը (օգտակար մոդելի արտնագրագումակության դայնաններ):

Որմես արդյունաբերական նմուշ օրենիվ սահմանված կարգով իրավական ղահղանություն տրամադրվում է իրի արտադրին տեսքը բնորոշող գեղարվեստակառուցվածքային այն լուծմանը, որը նոր է, ինքնաշիք և արդյունաբերության կիրառելի է (արդյունաբերական նմուշի արտնագրագումակության դայնաններ):

Ինչդես արդեն վերը նշվեց, այս օբյեկտների իրավական ղահղանության համար անհրաժեշտ է իրականացնել դրանց ղետական գրանցումը, ինչը կատարվում է սահմանված կարգով ղետական լիազորված մարմին (ՀՀ մտավոր սեփականության գործակալություն) ներկայաց-

ված հայտի հիման վրա: Ortենով սահմանված է, որ օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների հայտնով ղետական լիազորված նարմինն անցկացնում է միայն հայտի փորձաբննություն, որի ընթացքում ստուգվում են միայն հայտի նկատմամբ սահմանված դահանջները, և եթե դրանք դահլանված են, տվյուն է արտնագիր օգտակար մոդելին՝ 10 տարի, իսկ արդյունաբերական նմուշին՝ 15 տարի գործողության ժամկետով: Ակնհայտ է, որ նախատեսված է բավականին տարգ ընթացակարգ, որի համար սահմանված է բավականին սեղմ՝ երկամսյա ժամկետ:

Նման մոտեցումը առավելագույն չափով բխում է թե հեղինակների, թե սնտեսվարող սուբյեկտների շահերից, քանի որ շատ սեղմ ժամկետներում և բավականաչափ փոփոք ծախսերով հնարավոր է ստանալ արտնագիր, հետևադեմ նաև՝ սվյալ օրյեկտի նկատմամբ բացառիկ իրավունք: Չնայած, որ նման ընթացակարգով ստացած արտնագիրը որոշակի առումով անկայուն է, այսինքն տրվում է առանց արտնագրվող օրյեկտի արտնագրագումակության դայմանների ստուգման, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության ներկայիս սնտեսական դայմաններում նման ընթացակարգն ավելի նախընտելի է, քանի որ, նախ՝ ՀՀ մասվոր սեփականության գործակալությունը (Գործակալությունը) բոլոր դեմքերում հայտի փորձաբննության ժամանակ հաշվի է առնում նաև ՀՀ-ում գործող արտնագրերը, դրանով իսկ բացառելով նախկինում տրված արտնագրով որևէ այլ սուբյեկտին վերադափնած իրավունքների խախտման հնարավորությունը, երկրորդ՝ արտնագրված սվյալ օրյեկտի օգտագործման իրական հեռանկարների դեմքում արտնագրացերը հնարավորություն ունի սեփական նախաձեռնությամբ ստուգելու արտնագրով վերադափնած իրավունքների լիարժեք հիմքերի առկայությունը:

Բավականին ճկում և արդյունավետ ընթացակարգ է սահմանել օրենք գյուտերի իրավական դահլանության համար: Ortենի համաձայն, գյուտերին կարող է տրվել երկու ժեսակի արտնագիր՝ հայտ ներկայացնելու օրվանից հաշված 10 տարվա գործողությամբ նախնական արտնագիր, որը տրվում է դարգեցված ընթացակարգով, ինչպես նախատեսված է օգտակար մոդելների համար, և հայտ ներկայացնելու օրվանից հաշված 20 տարվա գործողությամբ հիմնական արտնագիր, որը տրվում է ներկայացված գյուտի ըստ էնության փորձաբննության հիման վրա, այսինքն՝ արտնագրագումակության դայմաններին գյուտի համադաշտասխանության ստուգման արդյունքում: Ընդ որում, օրենքը նախատեսում է, որ առավելագույնը մինչև գործողության 8-րդ տարվա ավարտն արտնագրացերը կարող է դիմում ներկայացնել Գործակալություն նախնական արտնագրով դահլանված գյուտի ըստ էնության փորձաբննություն անցկացնելու և 20 տարվա գործողությամբ հիմնական արտնագիր տալու մասին:

Այս համակարգի առավելությունը կայանում է նրանում, որ հեղինակը կամ նրա իրավահաջորդն ի սկզբանե ինքն է որոշում, թե ինչորին

ընթացակարգով է անհրաժեշտ ստանալ արտօնագիրը: Այստեղ, իհարկե, դեմք է առաջնորդվել հետևյալ դայմաններից ելնելով. եթե դեռևս որևէ նախադաշտման չկա տվյալ գյուտի սեփական օգտագործման համար, եթե շուկան դեռևս ուսումնասիրված չէ, եթե դեռևս առկա չեն օսարերկրյա դետուրյուններում տվյալ գյուտի իրացման համար իրական նախադաշտմաններ, այդ թվում՝ ֆինանսական, տեխնիկական, տնտեսական և այլն, առաջ նորատակահարմար է հայտ ներկայացնել նախադաշտման արտօնագիր ստանալու համար: Այս դարագայում, իհարկե, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օսարերկրյա դետուրյուններում արտօնագրելու համար հայտառուն իր տրամադրության տակ ունի 12 ամիս ժամանակ, որմեսզի Փարիզյան կոնվենցիայի շրջանակներում կարողանա օգտվել ազգային, այսինքն՝ ՀՀ -ում ներկայացված հայտի վրա հիմնված առաջնորդյան իրավունքից:

Եթե ՀՀ-ում տվյալ գյուտի իրացման համար առկա են անհրաժեշտ նախադաշտմաններ, առաջ իրանական դահանջի է վերածվում տվյալ գյուտի ըստ էության փորձաբնության անցկացումը, որմեսզի հնարավոր լինի ճիշտ գնահատել տվյալ գյուտի արտօնագրից բխող բացառիկ իրավունքների ծավալը և դրանց իրացման հնարավոր շրջանակները:

Այստեղ անհրաժեշտ է նախ դարզաբանել արտօնագրից բխող բացառիկ իրավունքները, այնուհետև՝ արտօնագիր ստանալու տրամադրությունը:

Օրենքը սահմանում է, որ արտօնագրատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց արգելելու արտօնագրով դահլիճն օբյեկտն օգտագործել առանց իր թույլտվության, ինչպես նաև օգտագործել իր հայեցնողությամբ, եթե դա չի խախտում այլ արտօնագրատերի իրավունքները: Մյուս կողմից սահմանված է, որ արդյունաբերական սեփականության օբյեկտի օգտագործում է համարվում այն դարձնակող արտադրամի դարձնակող, կիրառումը, վաճառքի առաջարկությունը, վաճառքը, դահեստավորումը, ներճուծումը եւ տնտեսական շրջանառության մեջ նեցմելու նյութ գործողությունները, ինչպես նաև գյուտի արտօնագրով դահլիճն եղանակի կիրառումը: Այժմ արդեն նկատի ունենալով արտօնագրատիրոջը վերադարձու նշված բացառիկ իրավունքները, դարձ է դառնում արտօնագիր ստանալու տրամադրությունը՝ ելնելով որոշակի նախադաշտմաններից:

ՀՀ-ում արտօնագրային հայտ ներկայացնելով՝ հայտառուի համար ստեղծվում են հետևյալ հնարավորություններ՝

- ստանալ նախադաշտման արտօնագիր և ունենալ 8 տարի ժամանակ՝ տվյալ գյուտի օգտագործման իրական հնարավորություն ստեղծվելու դեմքում ստանալու 20 տարվա գործողության արտօնագիր և այդ ընթացքում կարողանալ տվյալ գյուտն օգտագործել սեփական արտադրության մեջ, այլ անձանց տակ դրա օգտագործման լիցենզիա, անհրաժեշտ տրամադրության դեմքում նաև՝ արտօնագիրը զիջել այլ անձի՝ այսինքն վաճառել,

ՓՈՔՐ ԵՎ ՄԻԶԻՆ ՁԵՐՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ

- հիմք ընդունելով այդ հայտի վրա հիմնված և Փարիզայն կոնվենցիայից բխող առաջնության իրավունք՝ 12 ամսվա ընթացքում հայտ ներկայացնելու օսարերկրա մետություններում:

Սպառաբար օսաւելելոյա դեմուլցիոն ներում արտնագրումն իմֆ-նանդատակ չէ, այլ կատարվում է այն դեմքերում, երբ անհրաժեշտություն կա դաշտամանել արտահանվող արտադրանքը, որի արտադրության մեջ օգտագործված է արտնագրված օրյեկտը, երբ հնարավոր է հետազայում լիցենզային դայնանագրով թույլատրել այլ անձանց օգտագործել սվյալ օրյեկտը (լիցենզիա վաճառել), ինչուս նաև այն դեմքերում, երբ հնարա-վոր է դա օգտագործել նոր հիմնադրվող բիզնեսում, այսինքն սվյալ օյլու- թի հիմնա վրա ստեղծել նոր արտադրություն, նոր հիմնադրվող առևտուրային գործունեության մեջ ներմեջ որդես բաժնեմաս, զիջել(վաճառել) արտ- նագրն և այլն:

Օսարելյա ղետություններում արտնագրելու նպատակով կիրավում են հետևյալ մեխանիզմները՝

- «Դասական» մեխանիզմը սվյալ օսարերկրյա դետուքյան օրենս-դրույթան համաձայն ուղղակիորեն հայտ ներկայացնելն է,
 - հաջորդը Արտօնագրային համագործակցության մասին դայնա-նագրի (PCT) ցանկակմերում միջազգային հայտ ներկայացնելն է,
 - երրորդ Եվրասիական արտօնագրային կոնվենցիայի ցանկ- ներում Եվրասիական հայտ ներկայացնելն է:

Բոլոր դեմքերուած դրանց մեծք է Աախոռոյի ՀՀ-ում հայս Աերլայազներ:

Օսարերկյա տեսություններում արտնագրելու յուրաքանչյուր դեղում վերը նույած մեխանիզմներից որևէ մեկի ընտրության համար կատարվում է նախնական ուսումնասիրություն, որում են այն երկները, որտեղ նորատակահարմար է արտնագրումը (հաշվի առնելով վերը նույած նախադաշտմանները): Երկների ցանկը ճշգրտելուց հետո հնարավոր է դարձում ընտրել մեխանիզմը: Օրինակ, եթե անհրաժեշտություն կա գյուտն արտնագրել ԱՊՀ երկներում, բնականաբար, դեմք է ներկայացվի եվրասիական հայս, որի հիմնա վրա հնարավոր է սանալ ԱՊՀ 9 դեսություններում գրծող միասնական արտնագիր (բացառությամբ Վրաստանի, Ուգրեկստանի և Ուկրաինայի): Եթե անհրաժեշտություն կա ԱՊՀ երկներից բացի գյուտն արտնագրել նաև այլ երկներում, ապա նորատակահարմար է ներկայացնել PCT հայս: Ընդ որում, յուրաքանչյուր դեղում դեմք է նկատի ունենալ, որ PCT հայս ներկայացնելը, սնտեսական նկատառումներից ենթելով, նորատակահարմար է, եթե երկների թիվը գերազանցում է 5-ը:

Ալրանտային ճշաների և ֆիրմային անվանումների իրավական դահլանությունը

Աղբանվային նօւնի գաղափարը այնքան հին է, որքան հին են

արհեստավորությունն ու աղբանական իրացման գաղափարը: Սակայն, աղբանական նշաններն սկսեցին կարևոր դեր խաղալ համապես ինդրուսիալզացիայի ժամանակաշրջանում և դրանից սկսած շարունակում են մնալ որպես շուկայական սննդառության, մրցակցային դաշտարի, միջազգային առևտի կարևորագույն գործող:

Դաշտային մրցակցող սուբյեկտները սպառողին առաջարկում են արտաքանակի միջյանց նման, սակայն որպես աղբանական աղբանական բազմաթիվ ու բազմատեսակ աղբանական միջյանց միջնորդը: Այս դաշտարական աղբանական միջյանց միջնորդը կարողանա ընտրություն կատարել դրանց միջև: Դեմքեւարար շուկայում աղբանական միջյանց միջնորդը կատարում է ունենան աղբերակման որևէ միջոց, մասնավորապես՝ անուն, որի դերն էլ հենց կատարում է աղբանական նշանը:

Մյուս կողմից, աղբանական նշան ունենալով անհրաժեշտ է նաև արտադրողի համար որպես իր արտադրանի անհատականացման միջոց, որպեսզի դրանով կարողանա կողմնորոշել սպառողին և որոշակի առողջություն նաև կատ հաստատել նրա հետ: Այս կարգակցությամբ աղբանական նշանի սեփականաշիրոց համար անհրաժեշտություն է դառնում դահդարնել և էլ ավելի բարձրացնել իր աղբանական նշանով թողարկվող աղբանական որակը, որպեսզի չկորցնի «իր» սպառողներին և արդարացնի նրանց հովանությունը: Դեմքեւարար էթե աղբանական սպառողի հովանությունը, շուկայում տվյալ աղբանական նշանով աղբանական բացի այլ ընտրություն նա չի կատարի: Այսիսկ, աղբանական նշանը նրա սեփականաշիրոց համար վերածվում է բավականին արժեվավոր ոչ նյութական ակտիվի, որի իրավական դահդարնության աղափառվումը դառնում է անհրաժեշտություն: Այսինքն՝ յուրաքանչյուր լուրջ սննդավարող սուբյեկտ իր գործունեությունն սկսելու համար դեմք է ունենա իր աղբանական նշանով աղբանական նշանը:

Ինչու արդեն հետևում է վերը նշվածից, աղբանական նշան նշան նշան այն նշաններն են, որոնք հնարավորություն են տալիս աղբերել որևէ արտադրողի աղբանական նշանահայտ աղբանականից:

Աղբանական նշանների իրավական դահդարնությունը Դայասանի Դանրամետությունում իրականացվում է «Աղբանական և սպասարկման նշանների, աղբանական ծագման եղանումների մասին» ՀՀ օրենքով, ըստ որի, Դայասանի Դանրամետությունում աղբանական նշանի իրավական դահդարնությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով աղբանական նշանի դեմքեւարար գրանցման հիման վրա կամ Դայասանի Դանրամետության միջազգային դաշտարակման համապատասխան:

Օրենքով սահմանված կարգով նշանի գրանցման դեմքում դրա սեփականաշիրոց տվյալն է նշանի գրանցման վկայագիր, որը հաստատում է նշանի գրանցման փասթը, նշանի առաջնությունը, ինչու նաև

աղրանքային նշանի վկայագրում նշված աղրանքների նկատմամբ աղրանքային նշանի օգտագործման բացարիկ իրավունքը: Աղրանքային նշանը գրանցվում է 10 տարվ, ամեն անգամ ևս 10 տարվ երկարացնելու հնարավորությամբ:

Աղրանքային նշանի նկատմամբ բացարիկ իրավունքն առաջանում է դրա գրանցման դահից և դրա սեփականատիրոջը տախու է այն տիրապետելու, օգտագործելու և սնօրինելու, ինչորու նաև այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացարիկ իրավունք: Արանց աղրանքային նշանի սեփականատիրոջ թույլտվության ոչ ոք իրավունք չունի օգտագործել Հայաստանի Հանրապետությունում դադարանվող աղրանքային նշանը:

Գրանցված աղրանքային նշանի սեփականատերը բացարիկ իրավունք ունի երրորդ անձանց առևտույթին գրիծունեության ընթացքում արգելելու առանց իր թույլտվության աղրանքային նշանի կամ դրանով նշված աղրանքի դաշտասումը, կիրառումը, ներմուծումը, վաճառքը և դրա առաջարկը, ինչորու նաև այլ ձևերով սնտեսական շշանառության մեջ մասնակու կամ այլ նշանով աղրանքի կամ աղրանքային նշանի նույն նղատակով դահետավորումը և դրա գետեղումը այն աղրանքների վրա, որոնց համար գրանցված է և պահանջվու նշանը:

Օրենքով սահմանված է աղրանքային նշանի գրանցման կարգը, ըստ որի գրանցման հայտը ներկայացվում է ՀՀ մշակու սեփականության գրիծակալություն, որի հիման վրա անցկացվում է հայտի նախնական փորձաբանություն, այսինքն՝ կատարվում է դրա համապատասխանության ստուգումը սահմանված դահանջներին, այնուհետև ստուգվում են աղրանքային նշանի մերժման հիմքերը, որոնց բացակայության դեմքում նշանը գրանցվում է, հակառակ դեմքում՝ մերժվում:

Մերժման հիմքերը դասակարգված են «բացարձակ» և «այլ» հիմքերի: Ընդ որում բացարձակ հիմքեր հաճարվում են այն հիմքերը, եթե նշանը չի կարող գրանցվել, անկախ նրանից, թե ինչորիս աղրանքների համար է խնդրակալվում դրա գրանցումը: Օրինակ՝ «բացարձակ» հիմքերով գրանցման ենթակա չեն այն աղրանքային նշանները, որոնք բաղկացած են միայն այնուհի նշաններից, որոնք չունեն տարբերակիչ հատկանիշ, կամ դեռական զինանշաններ են, դրուել և խորհրդանիշներ, միջազգային կազմակերպությունների լրիվ կամ կրաս անվանումներ են կամ դրանց շփոթելու ասիդան նման նշաններ և այլն, կամ հաճընդիանու օգտագործման մեջ են մտել որոշ որոշակի տեսակի աղրանքներ բնորոշող նշաններ կամ համընդիանու ծանաչում սացած խորհրդանիշներ և մերժմաններ են կամ նշում են աղրանքի տեսակը, որակը, բանակը, հասկություններ, արժեքը, ստեղծման նղատակը, ինչորու նաև աղրանքի արտադրության և իրացման տեղի ու ժամանակը:

Որպես «այլ» հիմքեր հաշվի են առնվում նույն կամ նույնատիպ

աղրանգների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ գրանցման ներկայացված, ինչողևս նաև Հայաստանի Հանրապետության միջազգային դայմանագրի ուժով Հայաստանի Հանրապետությունում գրանցման գործողություն ունեցող աղրանգային նշաններն ու դրանց սկզբելու ասիդան ննան աղրանգային նշանները:

Հաւաքի են արնվում նաև Հայաստանի Հանրապետությունում հայտնի և այլ անձանց դատկանող Ֆիրմային անվանումները, որոնց նկատմամբ իրավունքները ստացվել են մինչև նույնահետ աղքանիքների համար աղքանիքային նշանի հայտ ներկայացնելը:

Օրենքի այս դրույթը շատ է կարևորվում համարես այն դասձառվ, որ Ֆիրմային անվանումները ևս «Ֆիրմային անվանումների ճասին» ՀՀ օրենուվ սահմանված կարգով գրանցվում են Գործակալության կողմից, որի ժամանակ, փոխադրանքաբար, հաշվի են առնվում նաև գրանցված ապրանքային նշաններ:

Չնայած, որ ֆիրմային անվանումն առևտրային իրավաբանական անձի անհատականացման միջոց է, որի միջոցով սլյալ իրավաբանական անձը տարբերակվում է այլ իրավաբանական անձանցից, այնուամենայնիվ, դրանք անմիջականորեն փոխկապակցված են աղբանական նշաններին, բանի որ այդ երկու միջոցներն ել որում դեմքերում կարող են օգտագործվել նույն նողաբանով, օրինակ՝ գովազդի, կամ կարող են կիրառվել աղբանական փաթեթավորման վրա՝ դրանով իսկ որում էլեկտրոնային առաջացնելով սղառողի հաճար: Խնդիրը հիմնականում կայանում է նրանում, որ այստիսի դեմքերում համարեն օգտագործնան օրիենտի վերածվում ֆիրմային անվանման տարբերակող անունը :

Սա է նաև այն հիմնական դաշտառը, որ համաշխարհային ժանաչում ունեցող շատ ընկերություններ իրենց ֆիրմային անվանան տարբերակող անունը գրանցում են որպես աղբանակային նշան իրենց գործունեության ոլորտին վերաբերող աղբանակային համար, իսկ շատ դեղին նաև՝ բոլոր աղբանակային եւ ծառայությունների համար: Այսինքն կարելի է ասել, որ ֆիրմային անվանումներն ու աղբանակային նշանները որոշակի առումով վերածվում են իրավական դադարանության համաժեկանությունների, և այդ առումով Հայաստանի Հանրապետության օրենսդրության կառուցվածքը անբողջովին ընկալվում է մեկ տաճարաբանական ուղղակիությամբ:

Այլ մուտքում կա հեղինակային և հարակից իրավունքների հարցում. դրան ծագում են սվյալ ստեղծագործության կամ հարակից իրավունքի օբյեկտի ստեղծման փասի ուժով և դրանց որևէ ձևական մուտքում կամ գրանցում չի դահանջվում:

Դարձային համակարգ ՓՄՁ սուբյեկտների համար

ՀՅ հարկային համակարգը բաղկացած է ուղղակի հարկերից՝

ներառյալ այնողիսիք, որոնք կախված են հարկ վճարողի գործունեության արդյունքներից (Եկամտահարկ և շահութահարկ) և այնողիսիք, որոնք կախված չեն հարկ վճարողի գործունեության արդյունքներից (հողի հարկ և գույքահարկ), անուղղակի հարկներից (ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ) և հարկը փոխարինող վճարներից (դարձեցված հարկ, որը հարկ վճարողների համար փոխարինում է ԱԱՀ-ն, շահութահարկը կամ Եկամտահարկը և հաստատրված վճարները, որոնք փոխարինում են ԱԱՀ-ն, ակցիզային հարկը, որոնց հարկ վճարողների համար՝ շահութահարկը կամ Եկամտահարկը):

